Վերնագիր՝ Վանի հայոց թագուհիները

Առարկան՝ Հայոց պատմություն

Դասարանը՝ 7- րդԱ

Տևողությունը՝ 6 շաբաթ

Սովորողներ՝

1. Ավագյան Մանե Մարտիկի
2. Գալստյան Աննա Գարիկի
3. Դավթյան Սոնա Գևորգի
4. Եղիազարյան Մարի Ռազմիկի
5. Բաքոյան Դավիթ Լեռնիկի
6. Հակոբյան Էլեն Սարգիսի
7. Մանուկյան Սուրեն Թադևոսի
8. Մարգարյան Անի Գեղամի
9. Խաչատրյան Մարիանա Գագիկի

Նպատակը՝

Սովորողները կծանոթանան Վանի թագավորության ավելի քիչ ուսումնասիրված թագուհիներին:

Սովորողները կվերլուծեն Վանի լեգենդար թագուհիների կերպարները և նրանց ավանդը Հայաստանի պատմության մեջ:

Սովորողները կզարգացնեն պատմական հետազոտության և ներկայացման հմտությունները:

Նյութեր՝

1. Դասագրքեր, հոդվածներ և առցանց ռեսուրսներ Վանի թագավորության մասին:

2.Վանի թագավորության քարտեզները:

3. Վանի թագավորության նկարներ և տեսանյութեր:

4. Սկզբնաղբյուրներ:

5. Թուղթ, մկրատ, սոսինձ և մարկերներ:

Վերջնարդյունքը՝ Ստանալ Վանի հայոց թագուհիների կյանքի և գործունեությանը վերաբերող տեսանյութ:

Ընթացակարգը՝

Շաբաթ 1:

1. Ծանոթացում Վանի թագավորությանը.

Սովորողները կդիտեն կարճ տեսանյութ Վանի թագավորության մասին:

Ուսուցիչը հակիրճ պատմական ակնարկ կներկայացնի և կբացատրի Վանի թագավորության կարևորությունը հայոց և համաշխարհային պատմության մեջ:

Շաբաթ 2:

2. ***Կազմակերպչական հարցեր.***

Ստեղծել աշխատանքային 3 խումբ՝ բաղկացած 3 հոգուց:

Ուսուցիչը տալիս է խմբերին հստակ առաջադրանքներ և սահմանում վերջնաժամկետ :

Շաբաթ 3:

3. ***Կատարված աշխատանքների ամփոփում, սխալների ուղղում ուսուցչի կողմից և նոր հանձնարարությունների տրամադրում:***

Լեգենդներից և պատմական աղբյուրներից օգտվելով տեղեկություններ հավաքել Վանի թագուհիների վերաբերյալ:

Ուսումնասիրել և վերլուծել Վանի հայկական թագավորության քաղաքականության և մշակույթի մեջ նրանց ունեցած ավանդը:

Շաբաթ 4:

4. ***Այցելություն թանգարաններ, հանդիպում թեմայի մասնագետների, բանախոսների հետ:***

1.Սովորողները կայցելեն Էրեբունի թանգարան կամ կլսեն հրավիրյալ բանախոսից, ով լրացուցիչ տեղեկություններ կհաղորդի Վանի թագավորության մասին:

2.Այնուհետև կվերանայեն նախորդ օրերին արծարծված թեմաները և կպատրաստվեն վերջնարդյունքի ստեղծմանը:

Շաբաթ 5:

Ստեղծել Վանի հայոց թագուհիների կյանքի և գործունեությանը վերաբերող տեսանյութ ,օգտագործել ՏՀՏ գործիքներ տեսանյութը պատրաստելու համար:

Շաբաթ 6:

8. ***Նախագծի ներկայացում.***

Աշակերտները իրենց դասընկերներին և ուսուցիչներին կներկայացնեն նախագիծը և կգնահատվեն: